ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ[1]

ԱԾԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *Սիրիա, ածխաջրածնային պաշարներ, գազատար, արևելյան միջերկրական, Լևիաթան հանքավայր, ահաբեկչություն, անվտանգություն, սիրիական հակամարտություն*

Հոդվածում փորձ է արվում հետազոտել ածխաջրածնային էներգակիրների դերը ու նշանակությունը սիրիական հակամարտության ծագման և զարգացման համատեքստում:

21-րդ դարում նավթի համաշխարհային պաշարների նվազմանը զուգահեռ այլընտրանքային էներգակիր է դիտարկվում գազը: Հետևաբար, արտատարածաշրջանային և տարածաշրջանային ուժերի համար գազի պաշարների վերահսկումը գլոբալ և լոկալ մակարդակներում համարվում է միջազգային հակամարտության հիմքը:

Արևելյան Միջերկրականում գազի և նավթի շուրջ երկրների միջև ժամանակակից հակամարտությունը քողարկված կերպով սկսվել է 1966թ-ից, երբ բրիտանական հետազոտական նավերը հայտնաբերեցին գազի հանքեր Էրատոստենես ծովային լեռան վրա[2]: Այնուհետ, 1977-2003թթ. Միացյալ Նահանգները և Ռուսաստանը հաստատեցին, որ Արևելյան Միջերկրականում գազը տարածվում է Լաթաքիայի ափերից մինչև Եգիպտոսի

[1] ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի ասպիրանտ: Էլ. փոստ՝ aleppo75@gmail.com

[2] Emery, K.O., Heezen, B.C., and Allan, T.D., 1966. Bathymetry of the eastern Mediterranean Sea. Deep-Sea Res., 13:173–192, Ryan, W.B.F., Stanley, D.J., Hersey, J.B., Fahlquist, D.A., and Allan, T.D., 1970. The tectonics and geology of the Mediterranean Sea. In Maxwell, A.E. (Ed.), The Sea (Vol. 4), 387–492

արևմտյան հատվածները՝ Էրատոստենես ծովային լեռան շրջակայքը, որը 180 կմ-ով տարածվում է Միջերկրական ծովի տակ՝ Լաթաքիայի լեռնաշղթայից մինչև Դամյատի հյուսիսային մասը: 1997թ. Իսրայելը մասնակցել է հետազոտման աշխատանքներին և 1998թ. Միջերկրական ծովի արևելյան հատվածում տեղադրել էլեկտրոնային սենսորներ, իսկ նրա պատրվակը միշտ Իրանն է եղել (հայտնաբերել Իսրայելի դեմ իրանական ցանկացած հրթիռային հարձակում), ապա 2020թ. օգոստոսի 17-ին, ամերիկյան «Նաուտիլուս» նավի միջոցով և Թուրքիայի օգնությամբ երկրաբանական հետազոտությունից հետո հայտարարել է, որ աշխարհի ամենամեծ գազի պաշարներից մեկը գտնվում է Արևելյան Միջերկրականում: Դա հսկայական «Լևիաթան» գազային հանքավայրն է՝ 122 տրիլիոն խորանարդ ֆուտ (tcf) պաշարով[3]:

Թեև Իսրայելը վերահսկողություն է հաստատել Լիբանանի և Եգիպտոսի ջրերի վրա, սակայն Սիրիայի, Լիբանանի և Եգիպտոսի բաժինը մնում է ավելի մեծ, քան իր բաժինը, իսկ Թուրքիան դուրս է եկել դատարկաձեռն, քանի որ նրա տարածքային ջրերը զուրկ են ածխաջրածնային պաշարներից: Այս հանգամանքը իր ծանրակշիռ դերը խաղաց Թուրքիայի համար հարևան երկիր Սիրիայի ներգին գործերին խառնվելու համար, որը արտահայտվեց այսպես կոչված «արաբական գարունը» Սիրիայում հրահրելով[4]:

Էներգետիկ պայքարը վաղ է սկսվել: Այն մշակել է ԱՄՆ նախկին փոխնախագահ Դիք Չեյնին (2000-2008թթ.)՝ Չինաստանի և Ռուսաստանի դեմ հստակ առճակատմամբ, և այն շարունակվել է Բ. Օբամայի քաղաքականությամբ: Այս քաղաքականությունը պայմանավորում է ԱՄՆ հիմնական դերակատարությունը

[3]Michael Ratner. Natural Gas Discoveries in the Eastern Mediterranean, Congressional Research Service Report, August 15, 2016, https://sgp.fas.org/crs/mideast/R44591.pdf

[4] جميل م. شاهين, "سورية الثالثة عالمياً بإنتاج الغاز", برلين: مركز فيريل للدراسات, تاريخ 2017/3/11

ածխաջրածնային աղբյուրների համար տերությունների միջև գլոբալ պայքարում[5]:

Դիք Չեյնին ժամանակին ձևակերպել է, որ աշխարհի ածխաջրածնային պաշարները բավականաչափ չեն աճում աշխարհի աճող կարիքները բավարարելու համար, և որ նավթի և բնական գազի մնացած մատակարարումների վերահսկողության ապահովումը հիմնական առաքելություն կլինի ցանկացած երկրի համար, որը ձգտում է ձեռք բերել կամ պահպանել առաջադեմ դիրքեր համաշխարհային քաղաքականության մեջ:

Դիք Չեյնին նույնպես հասկացել էր, որ ազգի վերելքը կարող է խոչընդոտվել սահմանափակելով էներգառեսուրսների մատակարարումը, քանի որ հասանելիությունը ածխաջրածնային պաշարներին կազմում է միջազգային հարաբերությունների առանցքը և մեծապես որոշում է ազգերի վերելքն ու անկումը: Այսպիսով, չորս մասից բաղկացած ծրագիր է կազմվել.

1. Ցանկացած գնով տեղական նավթի և գազի արդյունահանման խրախուսում՝ Միացյալ Նահանգների կախվածությունը ոչ բարեկամ օտարերկրյա մատակարարներից նվազեցնելու նպատակով, ինչը կավելացնի Վաշինգտոնի գործողությունների ազատությունը:

2. Պարսից ծոցից նավթի հոսքի վերահսկում (նույնիսկ եթե Միացյալ Նահանգները տարածաշրջանից ստանա իր նավթային հատկացումներից շատ ավելի փոքր մասնաբաժին)՝ նավթի այլ խոշոր մատակարարների վրա տնտեսական վերահսկողություն հաստատելու նպատակով:

3. Ասիայի ծովային ուղիների վերահսկում՝ նավթի և այլ հումքի հոսքը ԱՄՆ-ի տնտեսական պոտենցիալ

[5] محمد بيومي, "الصراع الأميركي الروسي على أنابيب الغاز في آسيا الوسطى والقوقاز", تاريخ 2013/12/11

հակառակորդներին (Չինաստան և Ճապոնիա) վերահսկելու նպատակով:

4. Եվրոպայում էներգիայի «դիվերսիֆիկացիայի» խրախուսում, հատկապես մեծացնելով ապավինումը Կասպից ծովի ավազանում Խորհրդային Միության հանրապետություններից նավթի և բնական գազի մատակարարումների վրա՝ Եվրոպայի մեծ կախվածությունը ռուսական նավթից և գազից նվազեցնելու նպատակով, հաշվի առնելով այն քաղաքական ազդեցությանը, որ այդ կախվածությունը տալիս է Մոսկվային[6]:

Առաջին նպատակն Ամերիկայի Միացյալ Նահանգների տեղական գազի և նավթի վրա հիմնվելու մեծացումն էր, ինչն առանցքն է էներգետիկ ռազմավարություն հանդիսացող ազգային էներգետիկ քաղաքականության, որը Չեյնին ներկայացրել է նախագահին 2001թ. մայիսին՝ նավթային խոշոր ներկայացուցիչների հետ լայնածավալ խորհրդակցություններից հետո: Ազգային էներգետիկ քաղաքականության առաջնահերթ նպատակն է դիվերսիֆիկացնել մատակարարումները: Խոսքը վերաբերում է նաև հիդրո և ատոմային էներգիային: Ծրագիրը նաև նախատեսում էր համակարգված արշավ՝ մեծացնելու Միացյալ Նահանգների կողմից Արևմտյան կիսագնդի բարեկամ երկրների էներգիայի աղբյուրների օգտագործումը, մասնավորապես՝ Բրազիլիայի, Կանադայի և Մեքսիկայի:

Երկրորդ նպատակը, որը Պարսից ծոցով նավթի հոսքը վերահսկելուն է վերաբերում, հիմնական պատճառը դարձավ Ծոցի առաջին պատերազմի մեկնարկի և 2003թ. Իրաք ներխուժելու համար: ԱՄՆ հիմնականում կենտրոնացել է ծովային ուղիների վերահսկողության վրա՝ Պարսից ծոցի մուտքի մոտ գտնվող

[6] "الغاز العربي حلم أمريكي قديم جديد: حروب العراق وأفغانستان وليبيا وسورية", جريدة السفير, العدد745, تاريخ 16 تشرين الثاني 2016

Հորմուզի նեղուցից (որտեղ օրական հոսում է նավթի համաշխարհային առևտրի 35%-ը), ապա Հնդկական օվկիանոսով մինչև Մալակկա նեղուց և Հարավային ու Արևելյան չինական ծովը[7]:

Ինչ վերաբերում է ռուս-ամերիկյան հակամարտությանը և դրա հետևանքներին, ապա այն սկսել է դրսևորվել իր ամենահայտնի տարրերով այն ժամանակ, երբ թվում էր, թե եվրոյի գոտու երկրներում հետընթաց է առաջացել ամերիկյան տնտեսական ճգնաժամի պայմաններում, որի պատճառով Միացյալ Նահանգների պետական պարտքը կազմել է 13,5 տրլն դոլար կամ ՀՆԱ-ի 91,4%-ը (2010թ.): Այն ժամանակ զգացվեց, որ ամերիկյան ազդեցությունը թուլացել է՝ դիմակայելու համար զարգացող տերությունների, ինչպիսիք են Չինաստանը, Հնդկաստանը և Բրազիլիան[8]:

Խորհրդային Միության փլուզումից հետո ամերիկացիները պատմական հարմար առիթ ունեցան դիրքավորվելու ածխաջրածնային հումքի շուկայում: Արդյունքում Ռուսաստանի դաշնությունը փորձեց կոնսոլիդացնել իր էներգետիկ (նավթ և գազ) ռեսուրսները: 1995թ. մշակվեց «Գազպրոմ» ընկերության ռազմավարությունը՝ ընդլայնվելու գազով հարուստ շրջաններում՝ Ռուսաստան, Ադրբեջան, Թուրքմենստան և Իրան: Այդ ժամանակ վստահ էին, որ «Հյուսիսային հոսք» և «Հարավային հոսք» նախագծերը լինելու են Վլադիմիր Պուտինի կրծքին Ռուսաստանին համաշխարհային ասպարեզ վերադարձնելու և եվրոպական տնտեսության նկատմամբ վերահսկողությունը անրապնդելու պատմական արժանիքների շքանշանը, որտեղ

[7] خليل عرنوس سليمان سليم, التحولات في النظام الدولي والإدارة الأمريكية للأزمات الدولية دراسة حالة الأزمة العراقية 2002-2004, رسالة ماجستير غير منشورة, جامعة القاهرة, كلية الاقتصاد والعلوم السياسية, 2010, ص 127-128.

[8] عماد فوزي شعيبي, "الصراع على الشرق الأوسط: الغاز أولاً", شبكة فولتير, 17 نيسان 2012

եվրոպական տնտեսությունը տասնամյակներ շարունակ հիմնված է լինելու գազի վրա նավթի փոխարեն[9]: Այդ պարագայում Վաշինգտոնը ստիպված էր շտապել մշակել իր զուգահեռ նախագիծը (Նաբուկո)՝ մրցելու ռուսական նախագծի հետ միջազգային ասպարեզում, որը վճռորոշ է լինելու հետագա ժամանակահատվածում զարգանալու համար:

Գազն իրականում հիմնական էներգետիկ նյութն է 21-րդ դարում, լինի դա նավթի համաշխարհային պաշարների նվազման պայմաններում էներգիայի այլընտրանքի, թե մաքուր էներգիայի տեսանկյունից, ուստի աշխարհում գազի պահուստային տարածքների վերահսկումը մեծ տերությունների համար հանդիսանում է միջազգային հակամարտության հիմքը՝ իր տարածաշրջանային դրսևորումներով:

Գազի քարտեզի նախնական ընթերցմամբ կարելի տեսնել, որ այն քանակի և սպառման տարածքներ հասնելու ունակության առումով կենտրոնացված է Արևելյան Միջերկրական ծովում (Սիրիա և Լիբանան), Կատարում և Եգիպտոսում[10]: Հաշվի առնելով այս իրականությունը, Մոսկվան շտապեց աշխատելու երկու ռազմավարական ուղղությունների վրա.

Առաջինը՝ ռուս-չինական «Շանհայի համագործակցության կազմակերպությունը» (ՇՀԿ), որը հիմնված է մի կողմից Շանհայի բլոկի տնտեսական աճի, մյուս կողմից՝ գազի աղբյուրների նկատմամբ վերահսկողություն հաստատելու վրա: Ըստ այդմ, Մոսկվան մշակել է երկու նախագիծ՝ առաջինը՝ «Հարավային հոսք» նախագիծն է, իսկ երկրորդը՝ «Հյուսիսային հոսք» նախագիծը, որոնք նպատակ ունեն դիմակայել ադրբեջանական և

---

[9] عادل خليفة, "عودة روسيا إلى الساحة الدولية عبر البوابة السورية", جريدة الأخبار, العدد 1746, لبنان 2012/7/12

[10] نافع صبري, "الغاز العربي: مستقبل الغاز في سورية", صحيفة تشرين, العدد 14, 2010/6/5, ص 31.

սևծովյան գազի նկատմամբ վերահսկողություն հաստատելու նպատակ հետապնդող ամերիկյան «Նաբուկո» նախագծին:

Երկրորդը՝ ռազմավարության մշակում, որը թույլ կտա մի կողմից կախվածության մեջ պահել Եվրոպան, իսկ մյուս կողմից վերահսկել մրցակցային գազի պաշարների տարածքները:

Սիրիայի գազային պաշարների խնդիրը

ԱՄՆ Երկրաբանական հետազոտությունների մարմնի կողմից սիրիական տարածքներում և Միջերկրական ծովում գտնվող նրա տարածքային ջրերում նավթի և գազի մեծ պաշարների հայտնաբերումը: Գազի պաշարները գնահատվում են ավելի քան 170 մլրդ. մ^3 (պաշարները մինչև վերջ ուսումնասիրված չեն՝ պայմանավորված Սիրիայի շուրջ ստեղծված անկայուն իրավիճակով): Սրան գումարած Սիրիայի ունեցած 230 մլրդ. մ^3[11] պաշարները, վերջինիս դարձնում են լուրջ խաղացող արևելյան միջերկրականում:

Սիրիան իր դիրքով և պաշարներով Եվրոպային գազի մատակարարման այլընտրանքային ուղի կարող է լինել, որը կշրջանցեր ռուսական գազի մատակարարման ուղիները: Գլոբալ խաղացողների այս նախագծերը խափանվեց նախագահ Բաշար Ալ-Ասադի անհանդուրժող մոտեցմամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Թուրքիայի փորձերին իսրայելիական գազը սիրիական տարածքով Եվրոպա տեղափոխելուն: Սիրիան կողմնակից է փոխարինել քննարկվող ուղղությունը պայմանական արևելյան ուղղությամբ, որտեղ իրանական գազի խողովակաշարը, որը անցնելու է Իրանի, Իրաքի և Սիրիայի տարածքներով և լինելու է «Գազ Պրոմի» աջակիցը, և միջերկրածովյան գազի ապագա փոխադրողը Չինաստան: Այս իրականության մեջ է պետք տեսնել

[11] Stergiou, Andreas. (2017). Energy security in the Eastern Mediterranean. International Journal of Global Energy Issues. 40. 320. 10.1504/IJGEI.2017.086842, p. 331

Սիրիայի դեմ սանձազերծած պատերազմը, որը միտված է վերահսկելի դարձնել Սիրիան որպես աշխարհաքաղաքական հանգույց։

2009թ. Իսրայելի նավթի և գազի արդյունահանման մեկնարկից հետո Միջերկրական ծովի ավազանը դարձել է գլոբալ խաղի մի մաս, ինչի արդյունքում պետք էր ակնկալել, որ Սիրիայի շուրջ լարումը մեծանալու է։

Բեռլինի «Ֆերել» ուսումնասիրությունների կենտրոնի կողմից ձեռք բերված վերջին տեղեկությունների համաձայն[12].

1- Գազի և նավթի սիրիական պաշարների 83%-ը կենտրոնացած են սիրիական անապատում և ափամերձ շրջաններում, մինչդեռ սիրիական հյուսիսարևելյան շրջաններում (ալ-Ջազիրա) գտնվում են պաշարների ընդամենը 12%-ը։

2- 2022թ-ից սկսած Սիրիական հյուսիսարևելյան շրջանների (ալ-Ջազիրա) հորերը սկսելու են սպառվել, մինչդեռ անապատի և ափամերձ շրջանների հանքերը, եթե շահագործվեն 2018թ. կմնան առնվազն մինչև 2051թ.։

3- Ըստ բնական գազի ապացուցված պաշարներով երկրների ցանկի, Սիրիան 2008թ. աշխարհում գազի պաշարներով զբաղեցրել է 43-րդ տեղը՝ 240,7 մլրդ. մ^3 ծավալով, իսկ նավթի պաշարներով՝ 31-րդ տեղը։

4- 2017թ. հայտնի է դարձել, որ սիրիական գազի պաշարները Պալմիրայի, Քարա, Տարտուս և Բանիասի շրջաններում ամենամեծն են վեց երկրների շարքում, իսկ այդ գազը արդյունահանելու դեպքում, Սիրիան դարնալու է «գազ արտահանող երրորդ երկիրը աշխարհում» և զբաղեցնելու է Կատարի տեղը՝ Ռուսաստանից և Իրանից հետո։ «Ֆերել»

[12] جميل م. شاهين, "سورية الثالثة عالمياً بإنتاج الغاز", برلين: مركز فيريل للدراسات, تاريخ 2017/3/11

ուսումնասիրությունների կենտրոնը սիրիական գազի պաշարները գնահատում է 28,5 տրլ.մ³:

5- Պալմիրայի հուսիսային երեք միջին չափի գազի հանքավայրերը բավարար են Սիրիան ամբողջությամբ էլեկտրական էներգիայով ապահովելու համար՝ օրական 24 ժամ, 19 տարով:

6- Իսրայելում հայտնաբերված գազի ծավալը համարժեք է Սիրիայում՝ 11%-ին, Լիբանանում՝ 8%-ին և Եգիպտոսում՝ 31%-ին:

«Արաբական գազատարում» Սիրիայի կենտրոնական դերը բացատրում է, թե ինչու է Սիրիան այսօր դարձել թիրախ, իսկ թիրախավորումն ամրապնդվում է այն փաստով, որ Թուրքիան, Իսրայելը և ԱՄՆ ցանկանում են բնական գազի անվտանգ հոսք Սիրիայի տարածքով և չեն ցանկանում, որ Սիրիայում այնպիսի գործող վարչակարգ լինի, որ այդ երկրների հանդեպ հավատարմության առումով պարտական չէ՝ սպառնալով կտրել մատակարարումների ճանապարհը կամ ներկայացնելով թանկ պահանջներ:

Հարկ է նշել, որ ոչ միայն նոր պահպանողականներն են մշակել այս ռազմավարությունը, այլև Ջիմի Քարթերի ժամանակաշրջանում Ազգային անվտանգության խորհուրդը նույնպես օգնել է նախագծել Եվրասիայի նավթային պաշարների համար պայքարը մեկ տասնամյակ առաջ և պարզ է, որ Օբաման և Թրամփը նույն օրակարգով առաջ են շարժվել, իսկ Բայդենն իր հերթին կշարունակի նույն ճանապարհով, սակայն տարբերվում են նրանց մարտավարության և քողարկման մեթոդները:

2009թ. Իսրայելում նավթի և գազի արդյունահանումը ազդարարեց Միջերկրական ծովի ավազանի և նրա պետությունների թիրախավորման մասին, և Սիրիան հայտնվեց թիրախավորման օղակի ներսում, ինչը նշանակում է, որ Սիրիան կամ հարձակման տակ է լինելու, կամ՝ տարածաշրջանում

խաղաղության ճանապարհ, իսկ Իսրայելը երբեք չի ցանկացել դրան հասնել փոխհամաձայնությամբ, այլ ավելի շուտ ուժով և ժողովուրդների ու երկրների ինքնիշխանության, անվտանգության և կայունության հաշվին, ինչը մերժվեց Սիրիայի կողմից, ի դեմս՝ ղեկավարության և ժողովրդի:

Այս առումով Բեռլինի «Ֆերել» ուսումնասիրությունների կենտրոնը մի շարք լուրջ փաստեր է եզրակացրել, մասնավորապես[13].

- Մոսկվայի պնդումը Սիրիայի պաշտպանության առումով, ոչ միայն Միջերկրական ծով ելք ապահովելու համար, այլ հաշվի առնելով, որ գազն ու նավթը ավելի կարևոր են: Տարտուսում մշտական ռազմածովային բազայի ստեղծումը պայմանավորված է այնտեղ առկա գազի պաշարներով: Ռուսաստանը պատրաստ է կռիվ տալ այդ պաշարների համար:
- Նույնը որոշ չափով վերաբերում է նաև Իրանին, քանի որ սիրիական ընդդիմության իշխանության գալը նշանակում է նրա տնտեսության 30%-ի վերացում:
- Քանի որ սիրիական հյուսիսարևելյան շրջանները (ալ-Ջազիրա) և անջատողականների կողմից վերահսկվող տարածքները սպառվելու են նավթից առաջիկա մի քանի տարիների ընթացքում, ապա ակնկալելի է, որ Վաշինգտոնի աջակցությունը վայելող խմբերը պետք է փորձեն ներթափանցել ածխաջրածնային պաշարներով հարուստ այլ շրջաններ:
- Թուրքիայի ներխուժումը Սիրիայի ինքնիշխան տարածք նպատակ ունի սիրիական գազային պաշարների հանդեպ վերահսկողություն սահմանել հանգամանքը: Թուրքիայի կողմից օկուպացված Հալեպի հյուսիս-արևմուտյան տարածքներում գտնվում են երեք փոքր գազի հանքեր, սակայն Թուրքիան

[13] جميل م. شاهين, "سورية الثالثة عالمياً بإنتاج الغاز", برلين: مركز فيريل للدراسات, تاريخ 2017/3/11

հավակնում է հասնել Ռակկա, որտեղ հանքավայրերը միջին մեծության են:

 ԴԱԻՇ-ին վստահված էր չեզոքացնել սիրիական Պալմիրայի հարակից գազային հանքավայրերի բնականոն աշխատանքը, որի հաջողության դեպքում հորդանանյան և Սաուդյան ուժերը պետք է մտնեին խաղի մեջ և վերահսկողություն սահմանեիր այդ հանքավայրերի հանդեպ: Սակայն այդ պլանները Սիրիայի բանակը և նրա դաշնակիցները խափանեցին և ազատագրեցին Պալմիրան:

 Այն ահաբեկիչները, ովքեր եկել են Լիբանանից և փորձել են տեղակայվել ալ-Քուսեյրի շրջանում, այնուհետև ձգտել են ընդլայնել իրենց դիրքերը դեպի արևելք և հարավ մինչև Քարա (բնական գազի հսկա աղբյուր), ջախջախվել և ոչնչացվել են:

 Ահաբեկիչները Գոլանում և Դարաայի շրջակայքում հսկում են գազի երեք հանքավայրեր, որոնց Իսրայելը ձգտում է լիովին վերահսկել և, որոնք հավասարապես գտնվում են իր կողմից օկուպացված Կունեյտրայի ու Դարաայի նահանգներին պատկանող հողերի միջև:

 Կատարի գազատարը վերջացած է և ժամկետանց, և այսօրվանից Դոհայի համար հույս չկա, որ այս գիծն անցնի Սիրիայի տարածքով:

 Սիրիայի դեմ պատերազմի ցանկացած դադարեցում կամ ավարտում նշանակում է, որ ուժերի հարաբերակցությունը ռազմական և տնտեսական առումով հանկարծակի շրջվեց հօգուտ Դամասկոսի, ուստի իրավիճակը բորբոքվելու է և մարտեր են ստեղծվելու այստեղ և այնտեղ: Հաշվի առնելով, որ վստահված գործակալները, այդ թվում՝ Թուրքիան, Սաուդյան Արաբիան և նրանց ահաբեկիչները, չեն կարողացել պարտադրել Վաշինգտոնի պայմանները, այդ իսկ պատճառով տեղի է ունեցել ԱՄՆ ուղղակի մուտքը:

Պետք է նշել, որ գազի և դրա փոխադրման ուղիների վերահսկումը հակամարտության առանցքն է, որը ակնհայտ երևում է Սիրիայի շուրջ 2011-2012թթ-ից տեղի ունեցող հակամարտությունը հետազոտելիս, քանի որ այս հակամարտությունում ուժերի բևեռացումն ակնհայտորեն շատ ավելի մեծ է քան ներքին պատճառները և սիրիական Տարտուս լոգիստական ռազմակայանի կամ տաք ջրերի խնդիրները, ուստի Սիրիայի կարևորությունն ակնհայտ է դառնում հաշվի առնելով, որ ով վերահսկում է այն, վերահսկում է նաև Մերձավոր Արևելքը, Ասիայի դարպասը, Պետրոսիայի բանալին (ըստ Եկատերինա II-ի) և Մետաքսի ճանապարհի սկիզբը (ըստ Չինաստանի), և ամենակարևորը, ով Սիրիայի միջոցով մուտք է գործում դեպի գազը տիրում է աշխարհին, հատկապես որ հաջորդ դարը գազի դարն է: Դամասկոսը ստորագրելով համաձայնագիր՝ իրանական գազը Իրաքով Սիրիայի տարածք, ապա Միջերկրական ծով անցնելու վերաբերյալ բացում է աշխարհաքաղաքական տարածքն ու գազային տարածքը և փակում «Նաբուկոյի» գազի համար՝ փրկարար օղակը[14]:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ Սիրիայի շուրջ ստեղված աշխարհաքաղաքական իրականության պատճառներից մեկը, եթե ոչ հիմնականը կապված է սիրիական ածխաջրածնային պաշարների տնօրինման ու տեղափոխման համար: Հաշվի առնելով տարածաշրջանային և արտատարածաշրջանային խաղացողների կատաղի մրցակցությունը արևելյան միջերկրականում և Սիրիային այդ գործընթացներից մեկուսացման քաղաքականությունը, պետք է սպասել, որ սիրիական ճգնաժամի հանգուցալուծումը դեռ երկար ճանապարհ է անցնելու:

[14] محمد الرميحي, "سر العقيد الروسية في الشرق الأوسط", صحيفة الشرق الأوسط, العدد 12611, 8 حزيران 2013

THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT

Mohammed Haj Ibrahim

(Summary)

The article attempts to study the role and significance of hydrocarbon resources and transportation routes in the context of the origin and development of the Syrian conflict.

In the 21st century, along with the decrease of global oil reserves, gas is being considered an alternative energy resource. Therefore, for extra-regional and regional powers, the control of gas resources and the transportation routes at the global and local levels is considered the basis of international conflict.

In summary, it can be concluded that one of the reasons for the geopolitical reality created around Syria, if not the main one, is related to the management and transportation of Syrian hydrocarbon resources. Considering the fierce competition of regional and extra-regional players in the Eastern Mediterranean and the policy of isolating Syria from these processes, it should be expected that the resolution of the Syrian crisis will still have a long way to go.

РОЛЬ УГЛЕВОДОРОДНЫХ РЕСУРСОВ В КОНТЕКСТЕ СИРИЙСКОГО КОНФЛИКТА

Мохаммед Хадж Ибрахим

(Резюме)

В статье предпринята попытка исследования роли и значения углеводородных ресурсов и путей транспортировки в контексте зарождения и развития сирийского конфликта.

В 21 веке, наряду с уменьшением мировых запасов нефти, газ рассматривается как альтернативный энергоресурс. Поэтому для вне региональных и региональных держав контроль над газовыми ресурсами и маршрутами транспортировки на глобальном и локальном уровнях считается основой международного конфликта.

Резюмируя, можно сделать вывод, что одна из причин создавшейся вокруг Сирии геополитической реальности, если не главная, связана с управлением и транспортировкой сирийских углеводородных ресурсов. Учитывая острую конкуренцию региональных и вне региональных игроков в Восточном Средиземноморье и курс на изоляцию Сирии от этих процессов, следует ожидать, что до разрешения сирийского кризиса еще далеко.